

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«24» հունվար 2020թ.

N 257 - Ա

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ «ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 15 ԵՎ ԱՎԵԼԻ MEV (ՄԵԳԱԷԼԵԿՏՐՈՆՎՈԼՏ) ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԳԾԱՅԻՆ ԱՐԱԳԱՅՈՒՑԻՉՈՎ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԲՈՒԺՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԻ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում 15 և ավելի MeV (մեգաէլեկտրոնվոլտ) հզորություն ունեցող բժշկական գծային արագացուցիչով ճառագայթային բուժման ծառայությունների փոխհատուցման համավճարային եղանակի գները՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել առողջապահության նախարարի տեղակալ Արտյոմ Սմբատյանին:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում 15 և ավելի MeV (մեգաէլեկտրոնվոլտ) հզորություն ունեցող բժշկական գծային արագացուցիչով ճառագայթային բուժման ծառայությունների փոխհատուցման համավճարային եղանակի գներ

	Ծառայություն	Համավճարի գին
1.	Չարորակ հիվանդությունների ճառագայթային բուժում Varian սարքով (1 սեանսի գինը)	26,500
2.	Չարորակ հիվանդությունների ճառագայթային բուժում Varian սարքով IMRT մեթոդով (1 սեանսի գինը)	46,500